355.23
Ծ-89

ՀԱՄ — ՀՍԽՀ

ՈՒԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

ԾՐԱԳԻՐ

ՄԻՔԻՆ ՅԵՎ ԱՎԱԳ ՀՐԱՄԿԱԶՄԻ ՅԵՐԿԲՈՐԴ ՏԱՐՎԱ ՊԱՐԱՊՄԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՐԱՏԱՐ. ՀՐՑԿ. ՀՐԵՂ. ԴԻՎԻԶԻՈՆԻ ՔԱՂԱՔԱՓՆԻ
1926 Թ.

15 MAY 2013
1 MAR 2010

ԽՍՀՄ ——— ՀԱԽՀ

Գրքեակարները բոլոր յերկրների, միացեք։

355.23
Ծ-89

ԾՐԱԳԻՐ

ՄԻԶԻՆ ՅԵՎ ԱՎԱԳ ՀՐԱՄԿԱԶՄԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏԱՐՎԱ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1003
Т354б

ՀՐԱՏԱՐ. ՀԱՅԿ. ՀՐԱՋ. ԴԻՎԻԶԻԱՅԻ ՔԱՂԲԱԺՆԻ

1926 թ.

41.230

ՀԱՅՊԵՏՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
Գրաս. 823 բ. Պատվ. 203. Տիրաժ 500

ՀՐԱՄԱՆ

ԽՍՀՄ ԲԱՆՎՈՐԱ-ԳՅՈՒՂԱՏԻՍԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Ք. Մոսկվա № 30 30 Ապրիլի 1926 թ.

1. Սրանով հայտարարվում են հրամկազմի յերկրորդ տարվա քաղաքական և հանրակրթական պատրաստության ծրագրերը՝ համաձայն Հանրապետության Հեղափոխական-Ռազմական Խորհրդի № 1515 հրամանի:

ա) Ծրագիր հասարակագիտության դասընթացի (քաղաքական տնտեսություն և արևմուտքի բանվորական շարժման պատմություն) և դրա վերաբերյալ գրականության ցուցակ.

բ) Ծրագիր քաղաշխատանքի դասընթացի և դրա վերաբերյալ գրականության ու ձեռնարկների ցուցակ.

գ) բացատրական ցուցումներ հասարակագիտության և քաղաշխատանքի դասընթացի յերկրորդ տարվա ծրագրի վերաբերյալ.

դ) Ծրագիր հրամկազմի յերկրորդ տարվա հանրակրթական պատրաստության և ռազմական նորմալ դպրոցների յերրորդ տարվա դասընթացի ու բացատրական ցուցումներ այդ ծրագրի վերաբերյալ:

Հիշյալ ծրագրերն ավարտելու ժամկետներն են մի-ջին հրամկազմի համար՝ 1927 թվի ապրիլի 27-ը և ավագ հրամկազմի համար՝ 1927 թվի հունվարի 1-ը:

ԲԳԿԲ Քաղվարչ. պետի տեղակալ՝ ԼԱՆԴԱ

Քաղվարչ. Ագիտպրոպբաժնի պետ՝
ԱԼԵՔՍԻՆՍԿԻՑ

I. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Պետք է անցնել ամբողջովին Միխայլովսկու «Քաղաքական տնտեսության տարրական դասընթացը» գրքով: Ամբողջ դասընթացը բաժանվում է 16 պատվերի՝ գրքի գլուխների քանակի համաձայն:

II. ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

17-ՐԴ ՊԱՏՎԵՐ: ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋՈՒՄ ՑԵՎ XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ 18-ՐԴ ԴԱՐԻ ՅԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԻՆ.—Հեղաշրջման սոցիալական հետևանքները. արդյունաբերական բուրժուազիայի դասակարգի առաջացումը, պրոլետարիատի առաջացման պրոցեսի ավարտումը: Մասսայական բանվորական շարժման սկիզբը: Պայքար մեքենաների դեմ:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ.—Բանվորական հարցը հեղափոխության ընթացքում:

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍՈՒՄ։—Արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը և բանվոր դասակարգի դրությունը։ Բանվորական շարժումն Անգլիայում։ Բանվորական շարժումը Կոնտինենտում։ Լիոնի 1830 թվի ապստամբությունը։ Ուտոպիական սոցիալիզմը։ Մարքս և Ենգելս։ Կոմունիստների մանիֆեստը»։

1848 թվի հեղափոխությունը։ Նրա համաեվրոպական նշանակությունը։ Հուլիսյան օրերը։

18-ՐԴ ՊԱՏՎԵՐ։ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆ I ԻՆՏԵՐԱՆՑԻՈՆԱԼԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Պրոլետարիատի տնտեսական և քաղաքական դրությունն Անգլիայում, Գերմանիայում ու Ֆրանսիայում։ Գիտական սոցիալիզմն ու նրա ազդեցությունը բանվորական շարժման վրա։

1-ԻՆ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ։—Նրա կազմն ու կազմակերպչական ստրուկտուրան։ Ինտերնացիոնալի դերը նրան ժամանակակից բանվորական շարժման մեջ։ 1-ին Ինտերնացիոնալի գաղափարական հոսանքները։ Մարքսիզմի ու բակունիզմի պայքարը։ 1-ին Ինտերնացիոնալի քայքայման պատճառները։ 1-ին Ինտերնացիոնալի նշանակությունը հետագա բանվորական շարժման համար։

ՓԱՐԻԶԻ ԿՈՄՈՒՆԱՆ։—Նրա կազմն ու ծագման պատմությունը։ Գաղափարական պայքարը նրա ներսում։ Կոմունայի սխալները։ Կոմունայի անկումն ու դրա պատճառները։ Սպիտակ տերրոր։ Կոմունան, որպես մի փորձ պրոլետարիատի դիկտատուրայի իրագործման համար։

19-ՐԴ ՊԱՏՎԵՐ։ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ II ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Պրոլետարիատի տնտեսական և քաղաքական դրությունը XIX դարի վերջին քառորդում և բանվորական շարժումը։ Արհեստակցական շարժման զարգացումը։ Տրեդ-յունիոնիզմն Անգլիայում և սինդիկալիզմը Ֆրանսիայում։ Սոցիալիստական կուսակցությունների առաջանալն ու աճումը։ Պարլամենտական պայքար։

2-ՐԴ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ։—2-րդ Ինտերնացիոնալի ծագումը, նրա կազմակերպությունն ու կապը բանվորական շարժման հետ։ 2-րդ Ինտերնացիոնալի զարգացման 2 շրջանը։ Ոպորտունիզմ, նրա քաղաքական և տնտեսական արմատները։ Ոպորտունիզմի աճումը բանվորական շարժման մեջ։ Պայքար սոցիալ-դեմոկրատիայի ներսում։ Զաբ թեի ծագումը։

ՊԱՏԵՐԱԶՄՆ ՈՒ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼԻ ՃԳՆԱԺԱՄԸ։—Ինտերնացիոնալն ու պատերազմը իմպերիալիստական պատերազմին։ 2-րդ Ինտերնացիոնալի կուսակցությունների դավաճանությունը պատերազմի ծագած բոպելին, որպես նրանց ոպորտունիստական հետևանք։ Սոցիալ-շովինիզմ։ 2-րդ Ինտերնացիոնալի անանկությունն ու նրա պատմական նշանակությունը։

20–ՐԴ ՊԱՏՎԵՐ։ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

1918—20 թ.թ. հեղափոխական վերելքը։ Ցեվրոպայի տնտեսական դրությունն ու դասակարգային հակասությունները պատերազմից հետո։ Բանվորական շարժման հեղափոխական վերելքն ու բուրժուազիայի չփոթությունը։ Նոյեմբերյան և հունվարյան դեպքերը Գերմանիայում։ Խորհրդային Բավարիա և Հունգարիա։ Հեղափոխական ալիքն Իտալիայում։ Գործադուլային շարժումը Ֆրանսիայում և Անգլիայում։ Սոցիալ-համաձայնողական կուսակցությունների դերը։ Կոմկուսակցության ծագումն ու Կոմինտերնի կազմակերպումը։ 2–րդ Ինտերնացիոնալի դերը։

ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՇՐՋԱՆ.—Հեղափոխության ալիքի նվազումը, բուրժուական ռեակցիա։ Ֆաշիզմ, նրա դասակարգային էությունը։ Կոմինտերնը և միասնական ճակատի համար մղած պայքարը։ Հեղափոխական շարժման վերելքը 1923 թվի աշնանը։ 1923 թվի գերմանական անցքերի դասերը։

ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԿԱՅՈՒՆԱՑՈՒՄՆ ՈՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ.—Կոմինտերնի 5–րդ կոնգրեսը կապիտալիզմի մասնակի կայունացման բնույթը։ Միջազգային հակասությունները հետպատերազմյան շրջանում և նրանց սրումը։ Դոուեսի ծրագիրն ու Լոկարնոն։ Դասակարգային հակասությունների սրումը։ Ազգային-ազատագրական շարժման վերելքն Արևելքում։ ԽՍՀՄ ամրացումը։ Համաշխարհային պրոլետարական հեղափոխության հեռանկարները։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

17–ՐԴ ՊԱՏՎԵՐ.

Ա. ՎԵՆԵԴԻԿՏՈՎ.—*«Միջազգային բանվորական շարժման պատմությունը»*. գլ. II, III, էջ 17—39, գլ. IV, էջ 91—102, գլ. V, էջ 157—170։

18–ՐԴ ՊԱՏՎԵՐ.

ԲԵՐԴՆԻԿՈՎ ՅԵՎ ՍՎԵՏԼՈՎ.—*«Քաղաքագիտության դասընթաց»*. գլուխ VIII, էջ 142—154 (կա նաև հայերեն լեզվով)։

Ա. ՎԵՆԵԴԻԿՏՈՎ.—*Մաս* III, էջ 39—54, գլ. IV, էջ 109-121, գլ. VII, էջ 170—175։

19–ՐԴ ՊԱՏՎԵՐ.

ԲԵՐԴՆԻԿՈՎ ՅԵՎ ՍՎԵՏԼՈՎ. գլ VIII, էջ 154-163

Ա. ՎԵՆԵԴԻԿՏՈՎ. գլ. III, էջ 54—64, գլ. IV։ էջ 121—134, գլ, V, էջ 206—243.

20–ՐԴ ՊԱՏՎԵՐ

Ա. ՎԵՆԵԴԻԿՏՈՎ. գլ. III, էջ 64—90, գլ. IV, էջ 134—156, գլ V, էջ 206—243։

ՍՏԱԼԻՆ.—Զեկուցում 14–րդ կուսկոնֆերենցիայի արդյունքների մասին (զեկուցման այն մասը, վոր չոշափում է կապիտալիզմի կայունացումն ու համաշխարհային հեղափոխության հեռանկարները)։

ԾՐԱԳԻՐ

ԲԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ ՏԱՐՎՈՂ ՔԱՂԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ

(№ 1515 հրամանով 2-րդ տարվա քաղպատրաստության համար):

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1-ԻՆ ՊԱՏՎԵՐ: ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ ՏԱՐՎՈՂ ՔԱՂԱՇԽԱՏԱՆՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ՏԵՂԸ, ԴԵՐՆ ՈՒ ՁԵՎԸ

Քաղաշխատանքի խնդիրները Կարմիր բանակում—քաղաքական ղեկավարություն, քաղաքական դաստիարակություն, մարտունակության բարձրացում, բանակի ամրացում, վորպես պրոլետարիատի դիկտատուրայի հենարանի: Կարմիր բանակի մարտիկը, վորպես մարտի տարը: Դաստիարակության դերը մարտիկի պատրաստության ընդհանուր սիստեմում: Բուրժուական ազգայնական-ազգասիրական դաստիարակությունը-կապիտալիստական բանակներում: Բուրժուական ազ-

մա-քաղաքական պրոպագանդի ուժերն ու միջոցները: Ինտերնացիոնալ-դասակարգային դաստիարակությունը Կարմիր բանակում: Մարտիկ-քաղաքացու դաստիարակությունը (ռազմականացում և խորհրդայնացում): Քաղաշխատանքի ձևերը Կարմիր բանակում:

II. ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

2-ՐԴ ՊԱՏՎԵՐ: ՀԱՄԿԿ (Բ) ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ԱՌԱՋՆՈՐԴ: ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կուսակցության դերը Կարմիր բանակի կազմակերպման ու ղեկավարման մեջ: Կարմիր բանակը 1920—25 թ.թ. շրջանում և կուսակցության դերը նրա շինարարության մեջ: Ցերկրային սիստեմի զարգացումն ու ամրացումը: Ազգային զորամասերի կազմակերպումը: Միահրամանատարության կիրառումը, կարգապահության ամրացումը, ռազմական ուժերի շինարարության տեխնիկական հիմնավորումը, յերկրի բոլոր ուժերին մասնակից դարձնելը Կարմիր բանակի մարտունակության ամրացման գործին: ՀամԿԿ (բ) վորպես Կարմիր բանակի կոլեկտիվ առաջնորդը:

3–ՐԴ ՊԱՏՎԵՐ։ԿՈՒՍԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՔԱՂԱՊԱՐԱՏԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Վաչտի բջիջ։ Գնդի բյուրո։ Պատասխանատու քարտուղար և զինկոմ։ Քաղլուսաչխատանքների կազմակերպումը գնդում։ Քաղղեկ։ Դպրոցի վարիչ։ Ակմբի պետ։ Գրադարանապետ։ Նրանց իրավունքները, պարտականությունները և փոխադարձ հարաբերությունները կուսակազմակերպության հետ։ Քաղմարմինները կարմիր բանակում. Քաղբաժին, կուսհանձնաժողովն ու զիվկուսկոնֆերենցիան։ Շրջանային Քաղվարչություն (Պուոկը)։ Շրջանային կուսհանձնաժողով, շրջանային կուսկոնֆերենցիա։ ԽՍՀՄ Կարմիր բանակի Քաղվարչություն (Պուռ)։ Հեղափոխական Ռազմական Խորհուրդ։ Քաղմարմինների փոխադարձ հարաբերությունները քաղաքացիական կուսակազմակերպությունների հետ։ Զինտրիբունալ։ Հատուկ բաժին (0. 0.)։

4–ՐԴ ՊԱՏՎԵՐ։ ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

Կուսակցական աշխատանքի անելիքները՝ ամբողջ կուսակցական կազմակերպության մարտական հատատուն միասնականության ամրացումը, Համ.ԿԿ (բ) և Համ. ԼԿՅԵՄ անդամների ու թեկնածուների դաստիարակությունը լենինիզմի վոգով։ Համ. ԿԿ (բ) պրոլետարական անկուսակցականների միջև, կուսակցության սկզբունքների և նրա պրակտիկ գործնեության ժողովրդականացումը։ Անկուսակցականներին զորամասերում և զորամասերից դուրս հասարակական–քաղաքական աշխատանքի մեջ քաշելն (տնտեսական հանձնաժողովներ, կապի հանձնաժողով, Մոպր, մասնակցությունը խորհուրդների աշխատանքին և այլն)։ Բջիջների զոնրաց ժողովներ։ Կարմիր բանակայիններին անկուսակցական կոնֆերանսներ։ Անհատական դաստիարակություն։ Անկուսակցականներին քաղլուսաչխատանքին մասնակից դարձնելը։

5–ՐԴ ՊԱՏՎԵՐ։ ՀԱՄԼԿՅԵՄ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԸ ԲԱՆԱԿՈՒՄ

ՀԱՄԼԿՅԵՄ անելիքները բանակում,—կուսակցությունն ու նրա աշխատանքին ոգնելը, ՀԱՄԼԿՅԵՄ անդամների ու թեկնածուների բոլշևիկյան դաստիարակությունը, անկուսակցականներին ՀԱՄԼԿՅԵՄ շարքերը քաշելը։ ՀԱՄԼԿՅԵՄ կազմակերպչական շինարարությունը բանակում։ Աջակցության խմբակների վերաբերյալ կանոնադրությունը։ Փոխադարձ հարաբերությունները կուսակցական կազմակերպության հետ։ ՀԱՄԼԿՅԵՄ ներմիութենական աշխատանքը։ ՀԱՄ. ԼԿՅԵՄ աշխատանքը անկուսակցականների միջև։

III. ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

6–7–ՐԴ ՊԱՏՎԵՐՆԵՐ։ ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՅԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Խմբակների կազմակերպումը պարապմունքների համար, պարապմունքների ժամանակը, չենքը, դաստ-

վորումն ու կարգապահությունը: Հաճախումն: Աուդիտորիայի ճանաչելը: Կարմիր բանակային աուդիտորիայի հատկանիշները, սոցիալական դրությունը, պրոֆեսիան, կրթությունը, կուսակցականությունը, ազգությունը, կրոնը և այլն:

Աուդիտորիայի ուսումնասիրության մեթոդները: Աուդիտորիայի թվական քանակը: Խմբակավարի դրագրի ձևն ու նրա վարելը: Թեմայի վերաբերյալ նյութերի ուսումնասիրությունը: Զրույցների ծրագրեր, կոնսպեկտներ, թեզիսներ կազմելը: Թեմայի վերաբերյալ ցուցադրական ձեռնարկներ ընտրելն ու պատրաստելը (ցուցադրական ձեռնարկների տեսակները): Դեպի ցուցադրական ձեռնարկները յեղած պահանջները (նրանց ճշտությունը, պարզությունը, գունեղությունը և այլն): Նյութերի բաշխումն ըստ ժամանակի: Մեթոդական նախապատրաստություն: Ցուցադրական-մեթոդական խորհրդակցություններ: Նրանց կազմակերպումն ու խնդիրները: Ցուցադրական քաղաքաշմունքներ: Քաղաքաշմունքների յուրացման ստուգումներ: Ստուգման ձևերը:

8-ՐԴ ՊԱՏՎԵՐ: ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ

Քաղպարապմունքների յերկամյա ծրագրի բաղադրիչ մասերը: Քաղպարապմունքների ծրագրի կախումը կարմիր բանակայինի ծառայության ժամկետից ու սոցիալական դրությունից: Քաղպարապմունքների յերկամյա ծրագրի կոմպլեկսային կառուցումը: Քաղպարապմունքների ծրագրի կոմպլեկսի բաղադրիչ մասերը.

քաղաքագիտություն, մայրենի լեզու, մաթեմատիկա, աշխարհագրություն և բնագիտություն: Հանրակրթական առարկաների տեղը ծրագրում: Մայրենի լեզվի ուսուցումը. գիտակից ընթերցանության ու գրության զարգացումը: Մաթեմատիկական գրագիտություն. կարմիր բանակայինների կողմից մաթեմատիկական ամենապարզ ձևերի, թվերի, դիագրամների ըմբռնումը: Աշխարհագրություն-ժամանակակից անցքերը հասկանալու համար քարտեզով կողմնորոշվելու հմտությունը: Բնագիտությունը, վորպես հակա-կրոնական պրոպագանդայի հիմք: Քաղաքական և հանրակրթական նյութի փոխադարձ հարաբերությունը քաղպարապմունքների ծրագրում:

9-11-ՐԴ ՊԱՏՎԵՐՆԵՐ: ՔԱՂՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Դասավանդման կոմպլեկսային սիստեմը: Կոմպլեկսային դասավանդման առավելությունը առարկայականի նկատմամբ: Կոմպլեկսային պարապմունքի կառուցումը—առարկաների դասավորությունը պարապմունքների ժամանակ: Սիստեմներ կոմպլեկսային պարապմունքների ժամանակ (կոմպլեկսի ասոցիատիվ կառուցումը): Քաղպարապմունքներն անց կացնելու մեթոդներ. լաբորատորային, հարց ու պատասխան, ակտիվ-աշխատանքային և այլն: Նրանց առավելություններն ու թերությունները: Կենդանի զրույցը, վորպես պարապմունքների կիրառման հիմնական մեթոդ: Հարց ու պատասխանը զրույցի ժամանակ: Հարց ու պատաս-

խանների նկատմամբ յեղած պահանջները։ Մանկավարժական կարևորագույն սկզբունքները քաղաքացիական մունքների կիրառման ընթացքում.—սկսել մոտիկից, ծանոթից, հաշվի առնել աուդիտորիայի պահանջներն ու հետաքրքրությունը, նրա զարգացումն ու հետամնացությունը և այլն։ Զրույցի կառուցման մեթոդները.—նպատակային և պատմա-համեմատական։ Մեկնաբանության յեղանակները, կոնտրաստ, համեմատություն, օրինակ, իրոնիա և այլն։ Ցուցադրական ձեռնարկների գործադրության մեթոդ։ Կարմիր բանակայիններին ակտիվ զրույցի մեջ քաշելն ու մեթոդները։ Պարապմունքների հետաքրքրությունը, նրանց կապը աուդիտորիայի կենցաղի հետ, կարմիր բանակայիններին տրվող աշխատանքները, եքսկուրսիաներ, մաքերի արտահայտության կենդանի ու պատկերավոր ձևը։ Պարապմունքների ժամանակ իրեն պահելու հմտությունը։

IV. ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

12-ՐԴ ՊԱՏՎԵՐ։ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՄԱՐՏԻԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԻՍՏԵՄՈՒՄ

Արտադպրոցական աշխատանքը, վորպես կուսակցության համար մի զենք Կարմիր բանակի մարտունակությունն ամրացնելու և կարմիր բանակայինների կոմունիստական դաստիարակության գործում։

Արտադպրոցական աշխատանքի բովանդակությունը.—

ա) պրոլետարական լենինիզմի, կուսակցության և Խորհրդային իշխանության ընթացիկ քաղաքականության և Կարմիր բանակի խնդիրների վերաբերյալ։

բ) միջազգային դրության և յերկրի պաշտպանության բացատրություն։

Հրաձգային պրոլետարական,

գ) դպրամասի քաղաքական-բարոյական դրության ամրացման վերաբերյալ տարվող աշխատանք։

դ) դիտակից և հաստատուն կարգապահության վրա տարվող դաստիարակություն։ Ժամանակակից պատերազմի պայմաններում անհրաժեշտ՝ մարտիկի ֆիզիկական ու հոգեկան հատկությունների դաստիարակություն։ Մարտիկի դաստիարակությունը Կարմիր բանակի արտադիցիաների վրա։

Ակումբը, վորպես ինքնագործունեության հասարակական կազմակերպություն։

13-ՐԴ ՊԱՏՎԵՐ։ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

Կամավորականություն։ Ինքնագործունեություն։ Ակտիվություն։ Շահագրգռվածություն։ Պատասխանատվություն։ Հասարակական կարգապահություն։ Կարմիր բանակայինների հասարակական կարծիքի կազմակերպում։ Աշխատանքի բաժանումը կազմակերպության անդամների միջև։ Հրամքաղկացմամբ կազմակերպությունը բանակայինների անձնական օրինակը։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
7/XI. 1922

Կարմիր բանակայիններին հուզող ու հետաքրքրող հարցերից դեպի կուսակցության ընթացիկ լոզունգների և Խորհրդային իշխանության ու Կարմիր Բանակի խնդիրների պրոպագանդը։

Արտադպրոցական աշխատանքի ձևերը, աշխատանք գրքի ու թերթի շուրջը, ինքնագործունեության ջերեկոներ լենանկյուններում, եքսկուրսիաներ, ցերեկույթներ ակմբներում և այլն։

14–ՐԴ ՊԱՏՎԵՐ։ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Ակումբի պետ։ Ակումբի վարչություն։ Արտադպրոցական աշխատանքի պլանը։ Աշխատողների հրահանգումը։ Կուսակցամակերպության ղեկավարումը։ Ակումբի խմբակները։ Լենինյան անկյուններ։ Գրադարան։

Կարմիր բանակային ինքնագործունեության խմբակ։ Կարմիր բանակայիններին արտադպրոցական աշխատանքով կազմակերպչորեն ընդգրկելու ձևերը։

15–ՐԴ ՊԱՏՎԵՐ։ ԼԵՆԻՆՅԱՆ ԱՆԿՅՈՒՆ

Լենանկյունը, նրա կազմակերպումն ու անելիքները։ Լենինյան անկյան արտաքին տեսքը։ Նախնական աշխատանքը լենանկյունում. խաղերի, բեմադրությունների, զրույցների, ցերեկոյթների կազմակերպում։ Մասսայական աշխատանք լենանկյունում. ինքնագործունեություն, կապի (ամիչկայի), հարց ու պատասխանների, ռազմական հուշերի, դիսկուսիաների և այլ ցերեկոներ։

V.

16–ՐԴ ՊԱՏՎԵՐ։ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՄԱՄՈՒԼ ՅԵՎ ԶԻՆԹՂԹԱԿԻՑՆԵՐ

Գնդերի ու վաշտերի պատի լրագրերի խնդիրները ու կազմակերպումը։ Թերթի բովանդակությունն ու արտաքին տեսքը։ Քաղաքական–բարոյական զրույցի հարցերը թերթում։ Կարգապահություն։ Ռազմական ուսուցումն ու կուսակցական կյանքը։ Զինթղթակիցներն ու թերթին թղթակցելը։ Պատի լրագրին կից կազմված զինթղթակիցների խմբակի աշխատանքը։ Շրջանային և գիվիզիայի կարմիր բանակային լրագրի դերն ու խնդիրները և նրա կապի ձևերը կարմիր բանակայինների հետ։ Շրջանային և գիվիզիայի թերթին թղթակցելը։ Կարմիր բանակային մամուլի դերը ռազմական քաղաստիարակության սիստեմում։ Թերթը, վորպես գործիք բնակչության մեջ ռազմական պրոպագանդ մըղելու համար։ Մամուլը ցերկրային զորամասերում։

VI.

17–ՐԴ ՊԱՏՎԵՐ։ ՀԱԿԱԿՐՈՆԱԿԱՆ ՊՐՈՊԱՊԱԳԱՆԴԸ ԲԱՆԱԿՈՒՄ

13–րդ կուսհամագումարի և քաղաշխատողների համամիութենական խորհրդակցության վորոշումը հակակրոնական պրոպագանդի մասին։ Հակակրոնական ագիտացիա ու պրոպագանդ։ Պրոպագանդի բնագիտական և սոցիալ–զոոակարգային բնույթը։ Լայն հանրակրթա-

կան աշխատանքը, վորպես հակակրոնական պրոպագանդի հիմք։ Ցուրաքանչյուր կրոնի ռեակցիոն բնույթը։ Կարմիր Բանակն ու կրոնը։ Հակակրոնական պրոպագանդը ազանդավորների (սեկտանտների) և ազգային փոքրամասնությունների մեջ։ Գյուղական կենդաղ։ Գյուղատնտեսությունը և բնության յերևույթները, վորպես պրոպագանդի յելակետ։ Պրոպագանդի ցուցադրական ձևը։ Եքսկուրսիաները։ Իրական վասաների ոգտագործումը։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԿ

2-ՐԴ ՏԱՐՎԱ ԲԱՂԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1-ԻՆ· ՄԻԶԱՆԿՅԱԼ ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1· Քաղաքատիպարակության խնդիրները չրջանային քաղվարչությունների պեսերի՝ Պուոին ատրնթեր 1925 թվի գարնան գումարված խորհրդակցության բանաձևը (հրատարակված և Պուո-ի № 16 ժողովածվում)։

2· Քաղպարապմունքների 2-ամյա ծրագրի բացատրական ցուցումների միջանկյալ մասը—Պուո-ի 1925 թվի № 21 ժողովածու։

3· ՀԱՄԿԿ (Բ) և Կարմիր Բանակը—պրակ 3-րդ—1-ին աստիճանի և պրակ 4-րդ՝ 2-րդ աստիճանի կուսլուսավորության դպրոցների համար—հրատ· Պետհրատի (ԳԻԶ)։

2-ՐԴ· ԿՈՒՍԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1· Հրահանգ Կարմիր Բանակի ՀԱՄԿԿ (Բ) բջիջներին։

2· 1925 թվին Պուո-ին ատրնթեր գումարված բջիջների քարտուղարների բանաձևը (հրատ· առանձին ժողովածվով)։

3· Կանոնադրություն գինվորական կոմխարների մասին։

4· Շրջանային քաղբջիջների 1924 թվի համամիութենական խորհրդակցության բանաձևը։

5· Հրահանգ ՀԱՄԼԿՑԵՄ բջիջներին։

6· ՀԱՄԼԿՑԵՄ-յան Կարմիր բանակում տարած աշխատանքների կանոնադրություն։

7· Կանոնադրություն Կարմիր Բանակի կուսլուսավորության մասին—Պուո-ի 1925 թվի № 19 ժողովածու։

[redacted]

9· Պետուխով—Կոմսոմոլը Կարմիր Բանակում։

10. «Спутник Политработника»—հոդվածներ կուսաշխատանքի հարցերի վերաբերյալ։

11· ՀԱՄԿԿ (Բ) և Կարմիր Բանակը (պրակ 5-րդ քաղգրագիտության (կուսլուսավորության) նորմալ դպրոցների համար· հրատ· Պետհրատի (ԳԻԶ)։

3-ՐԴ· ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1· Քաղպարապմունքների 2-ամյա ծրագիրը բացատրական ցուցումներով—Պուո-ի 1925 թվի № 21 ժողո-

վածու (լույս և տեսել առանձին գրքույքով, հրատ. Գվիգի)։

2. Ա. Դուչակ.—Բաղմամի մեթոդիկայի ձեռնարկ։

3. Կուզնեցով.—Մեթոդական ձեռնարկ գրագիտություն սովորողների համար։

4. «Спутник Политработника» հոդվածներ գրպրոցական աշխատանքի հարցերի վերաբերյալ (մանավանդ ընկ. Կուզնեցովի հոդվածները կոմսոմոլական քաղաքարտադրությունների մասին)։

4-ՐԴ. ԱՐՏԱԴՊՐՈՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Կարմիր Բանակի ու Նավատորմի ակմբների նորմալ կանոնագիրքը։

2. Հրահանգ Կարմիր Բանակի և Նավատորմի Լենինյան անկյունների աշխատանքի ու կազմակերպման մասին։

3. Պուտ-ի 1924 թվի № 256 հրաման։

5. Մ. Սլուխովսկիյ—Կարմիր բանակային գրադարանների տեխնիկան ու կազմակերպությունը։

5. «Спутник Политработника» հոդվածները արտադպրոցական աշխատանքի մասին։

5-ՐԴ. ԶԻՆԹՂԹԱԿՑԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Պուտ-ի 1925 թվի № 199 հրաման. Ժողովածու № 28։

2. Կուզբին.—Զինթղթակիցների շարժման դեկավարությունը։

3. Կուզբին.—Կարմիր բանակային պատի լրաղիր։

4. Զուզին.—Կարմիր բանակային մամուլն ու զինթղթակիցները։

6-ՐԴ. ԱՄԲՈՂՋ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քրեստոմատիա քաղաշխատանքի մեթոդիկայի վերաբերյալ.—կազմ. ՎՊԱՏ-ի աշխ. (մամուլի տակ), հրատ. Գվիգի։

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀԱՄԱՁԱՅՆ ՀԵՂ.-ՌԱԶՄ. ԽՈՐՀՐԴԻ № 1515 ՀՐԱՄԱՆԻ ՀՐԱՄԿԱԶՄԻ 2-ՐԴ ՏԱՐՎԱ ՔԱՂՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՔԱՂԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն Հեղափոխական Ռազմական Խորհրդի № 1515 հրամանի հրամկազմի 2-րդ տարվա քաղպատրաստության հասարակագիտության ծրագիրը պարունակում է իր մեջ քաղաքական դասընթացը, որը բաժանված է 16 յերկշաբթյա պատվերների և Արևմուտքի բանվորական շարժման դասընթացը, որը բաժանված է 4 պատվերի:

Քաղաքատնտեսության դասընթացը կազմված է՝ նկատի ունենալով հրամկազմի տեսական (թեորետիկ) տնտեսության հիմունքների յուրացումը: Այդ դասընթացը պետք է ներհյուսվի ԽՍՀՄ տնտեսական ձևերի ուսումնասիրության հետ, կապիտալիստական տնտեսության այն օրենքների ուսումնասիրության հետ, որոնք գործում են ԽՍՀՄ տնտեսությունում և կատուցվում են պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում: Քաղտնտեսության դասընթացի հատուկ ծրագիր

չի տրվում, այլ յենթադրվում է այդ յուրացնել նույն կարգով ու ծավալով, ինչպես նա տրվում է Միխայլովի «Քաղտնտեսության տարրական դասընթաց»-ը դրքում, որն այդպիսով հիմնական ձեռնարկ կը ծառայի այդ դասընթացի համար: Այդ դասընթացում հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն ուղիների ուսումնասիրության վրա, որոնցով մեր տնտեսությունը, անցման շրջանի ու տիպի տնտեսությունը, պիտի ընթանա դեպի սոցիալիզմ:

Տեսական քաղտնտեսության ուսումնասիրությունը՝ ԽՍՀՄ եկոնոմիկայի ուսումնասիրության հետ միասին կը նախապատրաստի սովորողներին անցնելու Արևմուտքի բանվորական շարժման պատմության հաջորդ դասընթացը, ինչպես նաև 3-րդ տարվա դասընթացը, այն է՝ Խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականությունը:

Արևմուտքի բանվորական շարժման պատմության դասընթացն ընդգրկում է XVIII դարի յերկրորդ կեսի արդյունաբերական հեղափոխությունից մինչև մեր օրերը յեղած շրջանը: Առնվում է միայն բանվորական շարժման զարգացման հիմնական այն մոմենտներն ու հիմնական պատմական փաստերը, որոնք բնորոշում են պրոլետարիատի պայքարի ուղիներն ու ձևերը և դասակարգային հակասությունների զարգացումը: Ուստի սովորողներին հարկավոր է նախազգուշացնել, որպեսզի նրանք չշեղվեն ծրագրից և չծանրաբեռնեն ծրագիրը փաստական տվյալներով: Այս դասընթացում հատուկ ուշադրություն պետք է դարձնել վերջին թեմայի վրա—բանվորական շարժումը իմպերիալիստական պատերազմից հետո, և մասնավորապես՝ պետք է ուշա-

դրությունը դարձնել կապիտալիզմի կայունացման ու պրոլետարական համաշխարհային հեղափոխության հեռանկարների վրա։ Այս նյութի մշակումը պետք է հիմնված լինի Կոմինտերնի վերաբերյալ՝ առաջին տարում արդեն մշակված նյութի վրա և պետք է լուսաբանվի Կոմինտերնի 5-րդ կոնգրեսի, 14-րդ կուսկոնֆերանսի և 14-րդ կուսհամագումարի վորոշումներով։ Այդ դասընթացի համար հիմնական ձեռնարկ պետք է ծառայի Վենեդիկտովի «Միջազգային բանվորական շարժման պատմությունը» գիրքը—հրատ. «Մոսկովսկիյ Ռաբոչիյ»· 1925 թիվ։

ԲԳ Կարմիր բանակի քաղաքխատանքի դասընթացը, վոր բաժանված է 20 պատվերի, պետք է անցնել հասարակագիտության դասընթացի հետ զուգընթացաբար։ Քաղաքխատանքի դասընթացն անցնելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրա վրա, վոր քաղաքխատանքի տեսական ուսումնասիրությունը սերտորեն կապված լինի գորամասում կատարվող ընթացիկ գործնական աշխատանքի հետ։ Քաղաքխատանքի դասընթացի վերաբերյալ հրամկազմի կատարած աշխատանքում մեծ տեղ պետք է բռնեն գործնական աշխատանքները։ Այդ դասընթացն անցնելիս բացի հիշատակված ձեռնարկներից պետք է լրիվ չափով ոգտագործվեն քաղաքխատանքի ընթացիկ նյութերը, քաղբաժինների հրահանգները և այլն։

Պուտ-ի Ագիտ-պրոպբաժնի պետ՝ Ալեքսինսկիյ

Դպրոց.—ծրագրային մասի պետ՝ Ցիրլին

ԾՐԱԳԻՐ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ, ԻՆՔՆԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ, ԿԱԶՄՎԱԾ ԲԳ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆՈՐՄԱԼ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐՏՍԵՐ ՈՒ ԱՎԱԳ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՎ

(Հրամկազմի 2-րդ տարվա անցնելիք ծրագիրն ըստ № 1515 հրամանի)

1-ԻՆ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ· Սովորական կոտորակներ։ Կոտորակների տեսքի փոփոխությունն առանց նրանց մեծության փոփոխման (իլյուստրացիա հատվածներով)։ Կոտորակների գումարումն ու հանումը։

2-ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ· Կոտորակների բազմապատկումը (իլյուստրացիա հատվածներով և մակերեսներով)։ Կոտորակների բաժանումը (իլյուստրացիա· մակերեսներով)։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ· Կոտորակներով (մաս-

նավարապետ՝ կոտորակներով աված պատվերներով մակերեսների հաշվման)։

ԿԱՊ առարյա կյանքի հետ։

3–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Խորանարդի և պարալելեպիպեդի (զուգահեռանիստի) ծավալը։—Խորանարդն ու ծավալի մետրիքական չափերը։ Պրիզմա (հատվածակողմ) և նրա ծավալը։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԽՍՀՄ բնական պայմանները։ Աշխարհագրական դիրքը, տարածությունն ու սահմանները։ Ռելյեֆն ու նրա առանձնահատկությունները ԽՍՀՄ առանձին մասերում։ Կլիման, վոռոգումը, դետերի նշանակությունը։ Բուսահողերն ու նրանց նշանակությունը գյուղատնտեսության համար։ Բուսական և կենդանական աշխարհ։

4–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Կշռի մետրիքական չափերը։ Մարմինի ծավալի ու կշռի կախումն իրարից։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ. Խորանարդի, ուղղանկյուն պարալելեպիպեդի ու պրիզմայի մոդելների պատրաստումը բացված կողմերով (развертка) տրված պատվերներով. սենյակների և այլ տարածությունների չափումը. հողային աշխատանքների հաշվումն։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԽՍՀՄ բնակչությունը։ Բնակչության թվական քանակն ու խտությունը։ Բնակչության դասակարգային կազմն ու բաշխումն ըստ պարապմունքների։ Գրագիտության տոկոսն ու նրա աճը։

5–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Շրջանագծի յերկարությունն ու մակերեսը. կան։ Լար։ Լարի տարածությունը կենտրոնից։ Հատող, շոշափող։ Բացատ (սեգմենտ), արտատ (սեկտոր)։ Շրջանագծի յերկարությունը։ Արտատի մակերեսն ու շրջանի մակերեսը։ Ուղղանկյուն և շրջանաձև դիագրամները։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Բնակչության ազգային կազմը։ ԽՍՀՄ և նրա կազմի մեջ մտնող հանրապետությունների պետական կառուցվածքը։

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Բջիջը, վորպես ամենապարզ որգանիզմ։ Բջիջը վորպես ամենապարզ որգանիզմ։ Նրա կազմն ու կյանքը։ Պրոտոպլազմը և նրա նշանակությունը բջիջի որգանիզմի կյանքում։ Բջիջի միջուկը։ Բլաստոֆիլյան հատիկները ու բջիջի այլ բաղադրիչ մասերը։ Բջիջի բաժանման պրոցեսը։ Միաբջիջ, բազմաբջիջ և գաղութ։ Հյուսվածքները։

6–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Կլան։ Կլանի ծավալը։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ. «Պի» թվի վորոշումը չափումով։ Դիագրամների գծագրումը։

ԿԱՊԸ հասարակագիտության, ժողովրդական տնտեսության, աշխարհագրության և այլ գիտությունների հետ։

Աշխարհագրություն. ԽՍՀՄ գյուղատնտեսությունը։ Գյուղատնտեսության սիստեմները։ Հողերի բաշխումն ըստ ծխերի (угодья)։ Հողերի բաշխումն ըստ

կարմրածների (ВЛАДЕНЬЯ) այժմ և հեղափոխությունից առաջ: Հացահատիկային տնտեսություն: Տեխնիկական բույսերի մշակույթը: Բանջարաբուծություն և այգեգործություն: Անասնապահություն և կենդանաբուծություն: Անտառային տնտեսություն:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ· Աշխատանքի բաժանումը բարդ օրգանիզմում: Խոշոր օրգանիզմները (բույսերն ու կենդանիները) միլիոնավոր մանրադիտական բջիջ—օրգանիզմների ընկերակցություն են: Մեքենա—օրգանիզմը:

7–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ· Հանրահաշվի ներածություն: Զորս գործողությունների հիմնական օրենքները: Հանրահաշվական արտահայտություն: Կոյեֆիցիենտ: Ասոիճան: Օրենքներ՝ տեղափոխման, համակցման և բաշխման:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ· ԽՍՀՄ գյուղատնտեսության արդի վիճակը համեմատած այլ պետությունների հետ: Գյուղատնտեսության զարգացման հեռանկարները նրա ինտենսիֆիկացիայի և յեռադաշտի վերացման հեռանկարով:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ· Բույսերի կյանքն ու արևի էներգիայի չբջանառությունը: Կենդանիներն ու բույսերը, վորպես տարբեր բնույթ կրող սննդի օրգանիզմներ: Արևի ճառագայթով ածխաթթվուտային մասնիկից բաժանված ածխածնի կլանումը բույսի կողմից: Հասկացողություններ ատոմների և նրանց միավորությունների մասին: Քլորոֆիլի նշանակությունը: Ածխածնի

միացումը ջրի հետ և ածխածին կազմելը: Ոգի՝ թթվածինով հարստանալը ածխաթթվուտի բաժանման ժամանակ:

8–ՐԴ· ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ· Զորս գործողությունների ավյալ և վորոնելի քանակի ֆունկցիոնալ կախումը:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ· Արդյունահան արդյունաբերությունը ԽՍՀՄ մեջ (добывающая промышленость): Բարածությունը, նրա աշխարհագրական տարածումը և արդյունահանությունը ԽՍՀ Միության մեջ համեմատած այլ պետությունների հետ: Նավթը, ամենագլխավոր ջրջանները և արդյունահանությունը համեմատած այլ պետությունների հետ: Կիզահողի (տորֆի) և կիզանուտ թերթաքարի (горючий сланец) բաշխումն ու նրանց արդյունահանությունը:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ· Բույսերի կողմից մոխրային տարրերի և ջրի յուրացումը: Բուսահողը, նրա քիմիական բաղադրությունը և մեխանիկական կառուցվածքը: Արհեստական մշակույթներ և բույսին անհրաժեշտ նյութերի հարցը: Պարարտացում: Հողի մշակումն ու վարումը: Ազոտային սնունդ:

9–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ· Ամենապարզ հավասարումներ: Ամենապարզ հավասարումների լուծման անալիտիկ մեթոդը չորս գործողությունների ավյալ ու վորոնելի թվերի ֆունկցիոնալ կախման հիման վրա: Թվական առանցք:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Կարևորագույն մետաղների աշխարհագրական բաշխումը և նրանց արդյունահանությունը համեմատած այլ պետությունների հետ: ԽՍՀՄ արդյունահան արդյունաբերության այժմյան վիճակը համեմատած այլ պետությունների հետ:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Նյութերի տեղափոխությունը բույսերում: Նեցուկային հարմարանքներ: Կենդանիների ու բույսերի շնչառությունը: Սերմերի ծլելը: Բույսերը, որպես էներգիա կուտակողներ: Ծաղկումն ու պտղաբերությունը: Բույսերի յերկարատև պայքարի հարմարվելը:

10–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Ամենապարզ հավասարումների լուծման գրաֆիկ մեթոդը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ. Կենսական հարցեր, որոնք լուծվում են հավասարումների ոգնությամբ:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԽՍՀՄ արդյունագործող արդյունաբերությունը (обрабатыв. промышленность): Արդյունագործող արդյունաբերության ամենակարևոր ճյուղերը: Մանածագործական արդյունաբերություն:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Ագրեգատային հարաբերությունները բուսական աշխարհում և նրա փոփոխությունների համառոտ պատմությունը: Լուսը (водород-ազոտ) և սունկը: Պարազիտներ և սապրոֆիտներ: Սերունդների փոփոխումն ու վերերկրյա բուսականության բարդացումը:

11–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Համեմատություն և նմանություն

Հարաբերություն: Համեմատություն: Համեմատության գլխավոր հատկությունները: Համեմատության անհայտ անդամի վորոշումը: Համեմատական և հակադարձ համեմատական մեծություններ:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Մետաղարդյունագործ արդյունաբերություն: Փայտագործ արդյունաբերություն: Մենդամթերքների մշակումը: Քիմիական արդյունաբերություն:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Տրանսպորտիզմի գործոնները: Սեռական բազմացում, նրա էությունն ու նշանակությունը հատկանիշների նոր կոմբինացիաներ կազմելու մեջ: Զիգոտը և սերմատոզոիդը, որպես միմյանց լրացնող բջիջներ: Սեռերի բաժանումն առաջացնում է ժառանգական հատկանիշների խառնուրդը: Կուսական բազմացում և նրան արհեստական յեղանակով սատանալը:

12–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Համեմատական թվեր. նման ֆիգուրաներ: Հատակագիծ և մանրաչափ: Ցեռանկյունիների հավասարությունը (կատուցման յեղանակով):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ. Ֆիգուրների չափերի, մասերի հաշվումը նրանց հատակագծերով: Հատակագծերի հանումը (սյոմկա): Ֆիգուրների հատակագծերի գծագրումը:

ԿԱՊ տեղագրության հետ:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԽՍՀՄ արդյունագործող արդյունաբերության արդի վիճակը համեմատած այլ պետությունների հետ: Ելեկտրիֆիկացիան և արտա-

դրական ուժերի զարգացման համար ձեռք առվող միջոցները։

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Ժառանգականությունն ու նրա օրենքները (Մենդելիզմ)։ Փոփոխականություն (մոդիֆիկացիա, կոմբինացիա և մուտացիա)։ Ձեռք բերած փոփոխությունների ժառանգումը (գենոտիպ)։ Գենոտիպերի ժառանգականությունը և ցանկացած ցեղեր ստանալը։ Յեվգենիկա։ Ուրիշներից օրգաններ պատվաստելը։ Սեռի փոփոխումը։ Յերիտասարդացնացումն ու նրա նշանակությունը կենդանաբուծության մեջ։ Մարդկանց յերիտասարդացնացումը։ Անաբիոզ։

13–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Համեմատական թվեր։ Համեմատական թվերը թվական առանցքով։ Գործողություններ համեմատական թվերով։ Ամենապարզ եմպիրիկ ֆունկցիաներն ու նրանց գրաֆիկան։

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ. Գրաֆիկների գծագրումը տրված թվերի աղյուսակներով։

ԿԱՊԸ հասարակագիտության և ժողովրդական տնտեսության հետ։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ. ԽՍՀՄ հաղորդակցության ճանապարհները։ Ծովային ճանապարհներն ու ամենագլխավոր նավակայանները։ Յերկաթուղային տրանսպորտ։ Ավիացիա։ Հաղորդակցության միջոցներ (հեռագիր, ռադիո և այլն)։

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Օրգանական աշխարհում վարչ ուղղությամբ կատարվող հեղափոխության տեսության կողմնակիցները և օրգանների վարժության մի-

ջոցով չրջապատին հարմարվելը (Լամարկիզմ)։ Մարդկանց անտեսության մեջ ցեղի ընտրությունը։ Գոյության կռիվը, վորպես բնական ընտրության գործոնը (Դարվինիզմ))։ Ընտրության օրենքը հանրական և բացատրում և միատեսակ բնական պատճառների նպատակահարմարությունը։ Մի օրինակ կենդանական աշխարհից, վորը ցույց տա օրգանիզմը չրջապատին հարմարվելը։

14–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Առաջին աստիճանի մեկ անհայտով ավելի բարդ հավասարումներ։ Հավասարման մի մասից մյուս մասն անդամների տեղափոխությունը։ Հավասարումը կոտորակ անդամներից ազատելը։ Թվական կոյեֆիցիենտով ավելի բարդ հավասարումների լուծում։

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Ապրանքափոխանակությունը ԽՍՀՄ մեջ։ Ներքին առևտրի ընդհանուր բնույթը։ Քաղաքի կապը գյուղի հետ (ամիչկա)։ ԽՍՀՄ տնտեսության պետական կանոնավորումը և անտեսական ամման հեռանկարները։

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Կենդանական աշխարհում սղդակցական հարաբերությունների և բիոլոգիական հարմարանքների տեսություն։ Մակաբույծներ (պարազիտներ) և «տերերի փոխորդ»։ Վողնաչարավորները, վորպես խիստ զարգացած ճյուղավորությունների տիպ։

15–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. 2 անհայտով 1–ին աստիճանի յերկու հավասարումների սիստեմ: Հավասարություններ կազմելը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ. Հավասարումների ողնությամբ չրջապատից վերցրած զանազան հարցերի լուծում:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Արտաքին առևտուր և արտահանության առարկաներ: ԽՍՀՄ դերը համաշխարհային տնտեսության մեջ:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Մարդն ու գիտությունը. Մարդու ծագման հարցը: Մարդու ամենամոտ ազգականները—անthրոպոիդներ: Նմանության և տարբերության դեմը: Մարդանմաններն ու մարդիկ, վորպես միևնույն ընի ճյուղեր: Մեր ազգակցությունը կապիկների հետ:

16–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Կառուցման հիմնական խնդիրներ ավյալ անկյանը հավասար նոր անկյուն կառուցել: Տվյալ անկյունը բաժանել յերկու հավասար մասի: Ուղիղի վրա ավյալ կետից կանգնեցնել ուղղահայաց: Բաժանել ավյալ հատվածը յերկու հավասար մասի: Ուղիղի վրա ավյալ կետից ուղղահայաց իջեցնել: Տվյալ կետի միջով ավյալ ուղիղին զուգահեռ անցկացնել:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Նյարդային սիստեմի կառուցվածքն ու աշխատանքը: Ռեֆլեկսներ: Բնազդը, վորպես բարդ անպայման ռեֆլեկս: Պայմանական ռեֆլեկս:

Փորձերը պայմանական ռեֆլեկսների վրա: Ուղեղը, վորպես «կենտրոնական հեռախոսական կենտրոն»: Հիպնոզ և ներշնչում:

17–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Շրջանում ներգծել քառակուսի, կանոնավոր վեցանկյունի և կանոնավոր յեռանկյունի: Կառուցել ավյալ բազմանկյունի նման բազմանկյուն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ. Կառուցման խնդիր:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Գիտությունը, վորպես մարդու ձեռքում ուժեղ զենք գոյության համար մղած կռվում: Որինաչափությունը բնության մեջ: Որգանական աշխարհը, վորպես աշխատանքի պայմաններին հարմարեցրած ֆիզիկո–քիմիական բարդ կազմ ունեցող մի չարք ավտոմատներ: Մատերիալիզմը բացատրում է աշխարհի բարդ պատկերը նյութի կոմբինացիաների բնական փոփոխումներով, դեն ձգելով գերբնական ուժերը:

18–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Հանրահաշվական արտահայտությունների ձևափոխումը. Պյութագորասի թեորեմը. Միանդամներ և բազմանդամներ: Բազմանդամի նման անդամները: Նման անդամների միացում:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ. Դարվինիզմ ու մարքսիզմ:

19–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ. Միանդամների ու բազմանդամնե-

ի գումարումը, հանումն ու բազմապատկումը։ Կրճատ բազմապատկման ֆորմուլաներ $(a+b)^2$, $(a-b)^2$, $(a+b)\cdot(a-b)$։

20–ՐԴ ՊԱՏՎԵՐ

ՄԱԹԵՄԱԹԻԿԱ. Պյութագորասի թեորեմը։ Բազմանդամի բաժանումը միանդամի վրա։

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՄՓՈՓ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռազմական նորմալ դպրոցների յերկրորդ և յերրորդ տարվա ուսուցման (կրասեր և ավագ դասարանների) ներկա ծրագրերն անմիջական շարունակությունն են 1–ին տարվա (նախապատրաստական դասարանի) ծրագրի։ Խնդիրների, նպատակների, առանձին առարկաների վորոշումը, ինքնապատրաստման վերաբերյալ բերած մեթոդական խորհուրդները, վոր տրված եյին նախապատրաստական դասարանի ծրագրի հետ, բնականաբար, պահում են իրենց նշանակությունը և յերկրորդ ու յերրորդ տարվա դասընթացի համար։

Ռազմական նորմալ դպրոցի դասընթացի համար պատրաստվող հրամանատարները պետք է նկատի ունենան, վոր Պուս-ի «Спутник Политработника» (25 թվի № 16–ից) թերթում տրվել են մի շարք մեթոդական ընույթ կրող հոդվածներ ինքնապատրաստման բոլոր հանրակրթական առարկաների վերաբերյալ։ Այդ հոդվածներում կոնկրետ ցուցումներ են տրվում, թե ինչպես պետք է անցնել այս կամ այն առարկան, դասընթացում վո՛ր և ամենակարևորը, ինչպես պետք է պատրաստվել դրանից, ձևանարկներից և այլն։ Բացի դրանից այդ

ամսաթերթը խորհուրդներ և տալիս ինքնադարգացման բոլոր հարցերի վերաբերյալ, ամսագրի միջոցով կարելի է պատասխան ստանալ այն բոլոր հարցերի նկատմամբ, որոնք տարակուսանք են պատճառում պարապողին: Ամսաթերթի թե հիշատակված հոդվածները և թե՛ խորհուրդները պետք է ամեն կերպ ոգտագործել պարապմունքների ժամանակ:

Ընդհանուր դիտողությունները, որ անհրաժեշտ է այստեղ անել, հետևյալն են:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մաթեմատիկայի դասընթացն իր մեջ պարունակում է թվաբանություն, երկրաչափություն և հանրահաշվի սկիզբը, իբրևց հետ ունեցած փոխադարձ կապով (կոմպլեկսով): Ուստի ծրագրում այս առարկաները բաժանված չեն իրարից: Նրանք միաժամանակ են տրվում: Որինակ՝ 3-րդ պատվերում տրված են և՛ թվաբանական և երկրաչափական հարցեր: Ամենադժվար պատվերներն են 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ, նրանց վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնել: Առավել ևս դժվար են 16, 17, 18, 19 և 20-րդ պատվերները (որոնք համապատասխանում են ծրագրի 14 և 15-րդ թեմաներին), ծայրահեղ դեպքում այդ պատվերները կարելի է ամենևին չմշակել (Ռազմական Դպրոցների Վարչության դպրոցական բաժնի № 181627 շրջաբերականը, որ հրապարակված է մաթեմատիկայի ծրագրի վերաբերյալ 1924 թվի սեպտեմբերի 10-ին):

Նյութն անցնելիս չափազանց կարևոր է ոգտագործել այն բոլոր ցուցումները, որոնք տրված են համա-

պատասխան զորձնական աշխատանքի վերաբերյալ,— խնդիրների լուծում, մոդելների պատրաստում, մակերեսների հաշվում, ֆիգուրների մասերի հաշվումը նրանց հատակագծերով և այլն, ինչպես նաև մաթեմատիկայի և առօրյա կյանքի, հասարակագիտության, ժողովրդական տնտեսության, աշխատանքի, ոգտակար զորձի կապը:

Ծրագրում հիշատակված զորձնական խնդիրները նաև այն նշանակությունն ունեն, որ նրանք իրար հետ կապում են թվաբանական և երկրաչափական նյութերը: Որինակ՝ «Սովորական կոտորակները» բաժինն անցնելիս (գումարում, հանում, բազմապատկում ու բաժանում), չպետք է բավականանալ վերացական կոտորակներով ($^1/_2$, $^3/_5$, $^7/_{12}$ և այլն) արած զորձողություններով, պետք է դրա մեջ կոնկրետ բովանդակություն դնել, կարելի է կոտորակներով մի շարք խնդիրներ լուծել մակերեսների հաշվման, հատվածների, զծերի զումարման, հանման վերաբերյալ և այլն:

Միանգամայն հասկանալի է, որ եթե ամբողջական թվերով զորձողությունները մոռացված են, նախ քան կոտորակներին անցնելը, պետք է կրկնել:

«Խորանարդի և պարալելեպիպեդի ծավալը» թեմայում պետք է պարզ յուրացնել այն տարբերությունը, որ կա մարմինների և հատվածակողմի մեջ: Այստեղ, իզուր, ոգտակար է ծանոթանալ դասագրքով և բուրգի հետ, թեև այդ չի մատնանշված դասագրքում: Անհրաժեշտ է հատատապես յուրացնել մետրիքական՝ ծավալի ու կշռի չափերը և մի շարք զորձնական խնդիրներ կատարել այդ մարմինների, շենքերի, սենյակների ծավալի

հաշվման, հողային աշխատանքների հաշվում կատարել և այլն:

«Շրջանագծի երկարությունն ու շրջանի մակերեսը» բաժնում կենսաբանական կետ է շրջանագծի ու նրա տրամագծի հարաբերակցությունը, վորը պետք է կատարել գործնական յեղանակով: Այդ թեմայի հետ միասին լավ է կրկնել նախապատրաստական դասարանի՝ «մակերեսների հաշվումը» թեման: Գործնական աշխատանքներ կարելի յե կատարել տան յուրաքանչյուր ատարկայի վրա, կարելի յե գծագրել ԽՍՀՄ տնտեսական աշխարհագրությունից վերցրած ուղղանկյուն և շրջանակաձև դիագրամներ և այլն:

«Պարզ հավասարումներ» բաժնում հատուկ ուշադրություն պետք է դարձնել պարզ հավասարումների լուծման գրաֆիկ մեթոդի վրա: Զավազանց կարևոր է լավ յուրացնել համեմատականության (ուղիղ և հակադարձ) և ֆիգուրների նմանության թեման: Վերջապես՝ դասընթացի վերջն է «հավասարումների» բաժինը:

2 անհայտով հավասարումների սիստեմն առանց մնասի կարելի յե թողնել, բավականանալով միայն մի անհայտով հավասարումներով, նույնը պիտի արվի ռազմական դպրոցների նոր ծրագրում:

Յերկրաչափությունն անցնելիս թեորեմների ապացույցումներ չեն պահանջվում. նրանք գլխավորապես պետք է անցնել եմպիրիկ (փորձնական) յեղանակով, բայց ամենապարզ թեորեմները ցանկալի յե ապացուցել:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Աշխարհագրության նյութն է ԽՍՀՄ ֆիզիկական և

գլխավորապես՝ տնտեսական աշխարհագրությունը: Այստեղ ամենից առաջ՝ անհրաժեշտ է ունենալ քարտեզ, ավելի հիշատ, յերկու քարտեզ՝ ֆիզիկական ու տնտեսական: Հարկ չկա անպայման հիշելու ամբողջ փաստական նյութը: Կարևոր է հիշել նրանց փոխադարձ կապը՝ հասկանալ, թե ինչո՞ւ ԽՍՀՄ այս ինչ մասում զարգացած է արդյունաբերությունը, այնինչ մասում՝ գյուղատնտեսությունը, ինչո՞ւ մի տեղ բնակչությունն ավելի խիտ է, մյուս տեղ նոսր և այլն: Վոչ միայն առանձին-առանձին պետք է ծանոթ լինել գյուղատնտեսության, արդյունագործող, արդյունահանող արդյունաբերության, այլև հասկանալ նրանց փոխադարձ կապը, մասնավորապես՝ պետք է իմանալ նրանց պատմությունը և նրանց հետագա զարգացման հեռանկարները: Յուրաքանչյուր թեմայում, ինչպես այդ ցույց է տրված ծրագրում, պետք է կատարել եքսկուրսիաներ, համեմատություններ այլ պետությունների տնտեսությունների հետ:

Զինվորականի համար չափազանց կարևոր է միաժամանակ պարզել այս կամ այն փաստի նշանակությունը ռազմական տեսակետից, ԽՍՀՄ հանմանների, արդյունաբերության, հաղորդակցության ճանապարհների ու կապի ռազմական նշանակությունը:

Գործնական աշխատանքներից, ինչպես ասված է վերևում, պետք է հատուկ ուշադրություն դարձնել քարտեզի վրա կատարած աշխատանքների վրա, ինքնուրույն կերպով գծագրել քարտեզներ, գրի առնել կարևորագույն մտքերը, նյութեր հավաքել ամսագրերից, լրագրերից և այլն:

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ռազմական դպրոցների բնագիտության ծրագիրն իր մի քանի մասերում ինքնուրույն մշակման համար առանձնապես դժվար է։ Վերևում այդ ծրագիրը բերված է ամբողջապես, բայց նրանից կարելի է մի շարք (ամենադժվարները) թողնել։

Այդ հատկապես հենց այն հարցերն են, որոնք կարող են չլինել, որպես հիմք ընդունած դասագրքում։ Այսպես կարևոր է յուրացնել հիմնականը, բջիջը, որպես ամենապարզ օրգանիզմ, բույսերի կյանքի հիմունքները (նրանց շնչառությունը, նյութերի փոխանակությունը), օրգանիզմների բազմանալը, վերջապես՝ որ ամենայականն է՝ էվոլյուցիայի տեսության սկզբունքները։ Այսպես կարևոր է նկատի ունենալ, որ ավելի լավ է քիչ՝ բայց լավ յուրացնել։ Ռազմական դպրոցների ծրագրի վերաբերյալ բացատրական ցուցումներում ամբողջ բնագիտության դասընթացի տեսքով ասված է. «Դասընթացի խնդիրն այն չէ, որ որքան կարելի է ֆիզիկայից, բիոլոգիայից և այլ գիտություններից փաստական շատ նյութ տալ։ Նրա խնդիրն այն է, որ ուսանողը, ստանալով տարրական գիտելիքներ և կարողանալով գործնականապես կիրառել նրանց կյանքում և մասնավորապես՝ ռազմական գործում, բնագիտության դասընթացի միջոցով ձեռք բերի բնության մասերիալիստական հասկացողություն և այդ հասկանալու մեթոդներ։ Առաջին հերթին՝ բնագիտությունը պետք է ցրի կրոնի տարածած բոլոր նախապաշարումները»։

Բանալով ուսանողի առաջ «Բնության օրենքները», անհրաժեշտ է ցույց տալ նրան այն հսկայական նշանակությունը, որ ունի այդ օրենքների ըմբռնումը մարդկային հասարակության համար բնության դեմ մղած պայքարում։ Դրա հետ միասին մատնանշել այդ օրենքների հետագա լուսաբանման անհրաժեշտությունը մարդու կողմից բնությունն ավելի նվաճելու համար։

Բնագիտության դասընթացը շատ մասերում սերտորեն կապված է հասարակագիտության հետ։

Ուստի այդ առարկաները պետք է անցնել առավելագույն չափով համաձայնեցնելով իրար հետ։

Այդ անձնապես վերաբերում է բիոլոգիային և մանավանդ նրանց, ովքեր ծրագիրն ինքնուրույն են անցնում։

Հանձնարարված գրականության, ձեռնարկների ցուցակն արդեն մատնանշված և նախապատրաստական դասարանի ծրագրում։

Այդ ցուցակը վերջ լրացումներով հետևյալն է.

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻՑ. թվաբանություն.—

Ланков. — Арифметический задачник или

Грационский. — Арифметический задачник или

Вишневский. Математика для красноармейцев.

(կա նաև հայերեն լեզվով)։

Геометрия — Астряб Опытный курс геометрии.

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ.—

Иванов и Курдов. — География,

Соколов и Уваров. География СССР или

Бузнов и Унсов. Учебник всеобщей географии или

Вольф и Мебус.—Экономическая география западных государств. (*տնտեսական աշխարհագրություններից կա հայերեն լեզվով Բորիսովի աշխատությունը*)։

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԻՑ.—

Филиченко.—Общедоступная биология.

Պատ-ի Ազիտպրոպրաժնի պետ՝ ԱԼԵՔՍԻՆՍԿԻՑ

Դպրոցական-ծրագրային մասի պետ՝ ՑԻՐԼԻՆ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Публичная Библиотека
7/XI. 1922
Именная, Мясницкая
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ.

Ի լրումն Քաղվարչության տված ծրագրի, ընդհանուր գիտելիքների ծրագրի մեջ մացվում է Հայաստանի տնտեսական աշխարհագրության համառոտ դասընթացը։ Վորպես ձեռնարկ առաջարկվում է Հ. Հովհաննիսյանի «Ռ.Ս.Հ.Մ. համառոտ աշխարհագրություն» դասագիրքը։

Այս տարի քննվողներից պահանջվելու յե նաև հայերեն լեզու (ուղղագրության հետ) «Կարմիր Աբև» 7-րդ տարվա դասագրքի սահմաններում, իսկ ռուսերեն լեզվից վարժ կարդալ և կարդացածը արտահայտել։

Դրա համար ներքև հիշված գեղարվեստական գրականության ընթերցումը ընդհանուր ծրագրի հետ պարտադիր է համարվում։

Հ.Հ.Դեվիզիայի Քարտուղարին։

ՑՈՒՑԱԿ

Գեղարվեստական գրականության միջին հրամ կազմի ընթերցանության համար.

[redacted]

3. ԲՈԳԴԱՆՈՎ.—Կարմիր աստղը։

[redacted]

5. ՑԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ.—Ցերկիր Նայիրի։

6. » » Ամբոխները խելագրված։

7· ԵՄ· ԶՈԼԼԱ·—Ժերմինալ:
8· ԻԼ· ԵՐԵՆԲՈՒՐԳ·—Ծխամորձը:
9· ԼԱՑԻՍ ՍՈՒԴՐԱԲ·—Մեր ուղին:
10· ԽՈՐՈՒՆԻ·—Նամակ Հազոյին:
11· ԱՐԱԶԻ·—Ընկեր Մուկուչը:
12· » » Ապրողները:
13· ԿՈՒՐՏ ԿԼԵԲԵՐ·—Մի կին գնում է:
14· ՄԱՐԻՅԵՏԱ ՇԱՀԻՆՅԱՆ·—Մի պատկեր քաղաքաց· կռիվներից:*
15· ԵՄԻԼ ՎԵՐՀԱՐՆ·—Ամբոխը:*
16· ՄԱԿՍԻՄ ԳՈՐԿԻ·—Հունվարի 9-ը:*
17· ԿԵՐԺԵՆՑԵՎ·—Մայիսի մեկը:*
18· ՈՒՊՏՈՆ ՍԻՆԿԼԵՐ·—Կապիտալի աշխարհում:*
19· Վ· ՀՅՈՒԳՈ·—Դրվագներ ֆրանսիական հեղափոխությունից:*
20· ԵՄԻԼ ԶՈԼԼԱ·—Ապագայի դերկրում:*

*Վերցրված են Կարմիր Աբև 5-րդ 6-րդ և 7-րդ դասագրքերից:

ՀՀ Ազգային գրադարան
NL0212597

41. 230